Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Հակոբ Արշակյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Հակոբ Արշակյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Իսպանիայի Թագավորություն (ք. Բարսելոնա), 2019 թվականի փետրվարի 24-27-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  «GSMA շարժական աշխարհ» 2019

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն «GSMA շարժական աշխարհ» համաշխարհային համաժողովի նախարարական ամենամյա ծրագրին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2019թ. փետրվարի 25-ից 27-ը ք. Բարսելոնայում կայացել է «GSMA շարժական աշխարհ» համաշխարհային համաժողովի նախարարական ամենամյա ծրագրիը, որին մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Հակոբ Արշակյանը:

Համաժողովը նախագահում էր «GSMA շարժական աշխարհ» գրասենյակի գլխավոր տնօրեն Մաթս Գրանդրիդը:

«GSMA շարժական աշխարհ»-ը հանդիսանում է բջջային կապի օպերատորների և կապի ոլորտը կարգավորող նախարարների ամենամեծ միջոցառումը: Համաժողովին զուգահեռ անցկացվել է հեռահաղորդակցության և բջջային նորամուծությունների մեծ ցուցահանդես, որին մասնակցություն են ցուցաբերել ոլորտը ներկայացնող խոշորագույն ընկերությունները իրենց արտադրանքով ու ծառայություններով, ներկայացվել են դրանց կիրառման համար անհրաժեշտ պայմանները:

Համաժողովի շրջանակներում քննարկվել են մի շարք կարևոր հարցեր՝ կապված կառավարությունների կողմից բջջային կապի ոլորտի զարգացման, ոլորտի հատուկ կարգավորման հիմնախնդիրների, ինչպես նաև ՏՏ ոլորտի զարգացման համար ներդրումների աջակցման հետ:

Նախարարական ամենամյա ծրագրի հիմնական թեմաներից են եղել աշխարհի առջև ծառացած նոր մարտահրավերները, որոնցից են՝

- Երկրագնդի բոլոր մարդկանց համար ստեղծել հնարավորություններ միանալու կապի համաշխարհային համակարգերին, որպես ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման հիմնական միջոց՝ բոլորի համար ստեղծելով կրթություն ստանալու, աղքատությունը կրճատելու, նորարարական արդյունաբերություն ստեղծելու հնարավորություններ և այլն:
- Տեխնոլոգիական այնպիսի կարողությունների ապահովումը, որոնք հնարավորություն կընձեռեն զարգացնել ենթակառուցվածքները՝ հսկայական տեմպերով աճող ինտերնետին միացվող միավորների քանակին և պահանջներին համահունչ:
- 5G տեխնոլոգիայով ինտերնետի հնարավորությունների բարձրացումը:
- Ինտերնետ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում մարդկանց կյանքի որակի դրական փոփոխությունները: «Սպառողների ինտերնետից» անցում կատարումը դեպի «արդյունաբերության ինտերնետի», որը հնարավորություն կտա բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը:
- Նոր տեխնոլոգիաների զարգացմանը համահունչ աշխատաշուկայում մեծ փոփոխությունները: Արհեստական բանականությամբ զինված տեխնոլոգիաների զարգացման արդյունքում հարյուրավոր մասնագիտությունների փոխարեն նոր տեսակի աշխատատեղերի ստեղծումը, որոնց համար մարդիկ պետք է պատրաստ լինեն սովորել և փոխել իրենց կարողություններն ու մասնագիտությունները:
- Ապակենտրոնացման անխուսափելիությունը: Ամպային համակարգերի լոկալիզացումը՝ հիմնականում կապուղիների ժամանակային պարամետրերի բարելավման նպատակով, ինչպես նաև ինֆորմացիոն անվտանգության տեսանկյունից:
- Ինտերնետին ապագայի իրերի միացված լինելը, իրերի ինտերնետ (internet of things) հասկացության աստիճանաբար անցումը դեպի ամեն ինչի ինտերնետ (internet of everything):

Համաժողովի քննարկման թեմաներից էր նաև ինֆորմացիոն անվտանգությունը և վստահությունը տեխնոլոգիաների նկատմամբ, որը հանդիսանում է ներկա ժամանակաշրջանի լրջագույն մարտահրավերներից:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

2019 թվականի Նախարարական ծրագիրը լայն հնարավորություն է ընձեռել շարժական կապի ոլորտի առաջավոր միջոցառման ընթացքում փոխգործակցելու հանրային և մասնավոր հատվածների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ուսումնասիրելու առաջավոր տեխնոլոգիաներն ու մասնակցություն ցուցաբերելու ցուցահանդեսներին:

Տարբեր հարթակներում քննարկումների, բարձրաստիճան պաշտոնյաների և ընկերությունների ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում նախարար Հակոբ Արշակյանը ներկայացրել է բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի կառավարության որդեգրած քաղաքականությունը, ընդգծել հայ մասնագետների ունեցած ներուժն ու հնարավորություններն այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերում:

Հակոբ Արշակյանը ներկայացրել է նաև այն քայլերը, որոնք կնպաստեն Հայաստանի ինտելեկտուալ սեփականության միջազգային ճանաչմանը, հայկական բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների զարգացմանը, մրցունակության և միջազգային հեղինակության բարձրացմանը:

X _____

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարար՝

Հակոբ Արշակյան

04.03.2019 թ.